վանդակ զարդարանքներէն մերկանալ զորոնք իր որդւոցը և ազգականացը կը բաժնէ, և այս բաներս այնպիսի զբ-ւարթ և անայլայլ դէմքով մը կ'ընէ, որ կարծես թէ շիտակ արքայութիւն պիտի թռչի։ Ասոնցմէ շատերը զօրաւոր ըմպելիքներով իրենք զիրենք կէս մը կը թմրեցնեն, որով և փոսին չորս կողմը հազար ու մէկ յիմարական խաղեր կը պարեն։ Այսպէս ամեն զարդարանքներէն մերկանալէն ետքը, մինչ կռոց պաշտօնեաներէն մէկը փոսին մէջ կրակ կը ձգէ, ինքը կը դառնայ մարդկանց և բարձր ձայնով կ'ըսէ անոնց. Տեսէք, ո՛ արք, թէ ո՛րչափ աւելի պէտք է սիրէք և յարգէք ձեր կանայքը, որոնք յօժարակամ անձնամահ կ'ելլան իրենց ամուսնաց դիականցը վրայ։ Վերջը կանանց դառնալով կ'ըսէ անոնց. Տեսէք դուք ալ թէ ո՛րչափ պէտք է սիրէք և հաւատարիմ ելլաք ձեր ամուսնացը։ Այսպէս ըսելով գլխուն վրայ գեղեցիկ սափոր մը կը բարձրացընէ լի անուշահոտ իւղով և կամ բալասանաւ, և սափորին հետ միատեղ գլխիվայր կայծականց մէջ կը գլորի։ Նոյն միջոցին իր որդիքները և ազգականները անուշահոտ եղեր կը լեցընեն վրան որով և քիչ ժամանակի մէջ կ'այրի և մոխիր կը դառնայ։

Բայց սակայն ամեն կին այս բարբարոսական և միանգամայն պարսաւելի արութիւնը չունենալով՝ չէր համարձակէր ինք զինքը կրակը նետել ամուսնոյն դիականը վրայ, որով և մեծ անարգանք կը պատճառէր իրեն անձին, վասն զի այնպիսւոյն գլխուն մազերը կը գերծէին և հանդիսական նզովքներով տանէն դուրս կը վռնտէին, որ ասդին անդին թափառական պտտելով կեանքը կ'անցնէր։

Արևելեան առաքիներ.

Պարկեշտ եղիր, և ամենքը զքեզ կը յարգեն. բայց երբոր քու խօսքերովդ կը ջանաս զուրիշները քու արժանաւորութեանդ համոզել, այս միայն բաւական է որ վրադ տարակուսին։

Ամենայն չար մտածութեան սկիզբը դատարկութիւնն է։

Դատաստաններէ զգուշացիր. կրակի կը նմանին, որ երբ կը բռնկի՝ դժուարաւ կը մարի։

Ով որ միշտ կը գործէ և ոչ երբէք կը խորհի, վերջապէս աշխատութիւնը կը կորսնցնէ։

Մարմինը քունով կ'ուժոգնայ, իսկ միտքը՝ հսկելով։

Մեծ հոգւոյ նշան է գթալ թշնամւոյն վրայ՝ անոր թշուառութեան ատեն։

Մարդուս համար ամենէն գնասակար սուրն է ցանկութիւնը։

Վհատութիւնը շատ աւելի ծանր է քան համբերութիւնը։

Մեծագոյն չարիքները լեզուէն առաջ եկած են։

Մեծ խոհեմութիւնն է տեսնել բանին սկիզբէն անոր կատարածը։

Ցարատեմ ձեռք զարկած բանիդ մէջ, և ամեն դժուարութեանց կը յաղթես։

Գործելէդ առաջ մտածէ, և բան մի՛ սկսիր առանց աղէկ քննելու պարագաները։

Լաւ գիրք մը և կամ լաւ խօսակցութիւն մը կրնան օգուտ ընել. բայց բարի օրինակը շատ աւելի զօրաւոր կը խօսի մարդուս սրտին։

Եղբայր մը՝ որ իր եղբօրը գնասովը իրեն դիւրութիւնը կը փնտռէ, ոչ եղբայր է և ոչ ազգական։

---

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ